ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

(Համառոտ բացատրություն)

Սբ. Պատարագի խորհուրդը Վերջին ընթրիքի ժամանակ հաստատեց Հիսուս Քրիստոս: Պատարագը Քրիստոսի զոհաբերության խորհուրդն ունի , որով ամեն հավատացյալ մի պահ վերանում է ու հոգով վերապրում Նրա տառապանքը եւ Նրա անսահման սերը հանդեպ մարդկանց, որոնց համար Ինքը զոհվեց: Սբ. Պատարագը Սիրո խորհուրդն է« որովհետեւ դրանով Հայր Աստված սրբագործված հացն ու գինին Ս. Հոգու ներգործությամբ վերածում է Իր Միածին Որդու Մարմնին ու Արյանը՝ դրանք բաշխելով ու ճաշակողներին միավորելով Իր հետ:

Պատարագի արարողության գիրքը կոչվում է Պատարագամատույց կամ Խորհրդատետր: Պատարագի արարողության կարգը առաջին երեք դարերում ընդհանուր էր բոլոր քրիստոնեական եկեղեցիներում: Ս. Գրիգոր Լուսավորիչը« Կեսարիայից բերելով Բարսեղյան պատարագամատույցը« այն ավանդեց Հայ Եկեղեցուն: Ժամանակի ընթացքում այդ պատարագամատույցը հայացվել եւ մշակվել է Հայ Եկեղեցու հայրերի կողմից եւ այսօր էլ օգտագործվում է մեր եկեղեցում: Ս. Պատարագի արարողությունը« ըստ հայոց Պատարագամատույցի« բաժանվում է հետեւյալ մասերի. Ա. Պատրաստություն, Բ. Ճաշու պաշտոն, Գ. Կանոն Ս. Պատարագի, Դ. Արձակում:

Պատարագին մասնակցող գլխավոր անձինք պատարագիչ քահանան« սարկավագը եւ դպիրներն են: Դպիրները ներկայացնում են ժողովրդին, եւ այն, ինչ երգում են« արվում է ժողովրդի անունից, լինի դա պատասխան« զոհունակության արտահայտություն, թե խնդրանք: Պատարագիչ քահանայի եւ ժողովրդի, այսինքն՝ դպիրների միջեւ միջնորդը սարկավագն է՝ քահանայի օգնականը եւ սպասավորը:

Ա. ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Զգեստավորում, լվացում: Ս. Պատարագի առաջին՝ Պատրաստության մասը սկսվում է զգեստավորման արարողությամբ: Քահանայի ավանդատուն մտնելը« նախկին հանդերձները հանելը եւ ավելի

պայծառները հագնելը խորհրդանշում է հին« մեղավոր մարդուց մերկանալը, նորը՝ Քրիստոսին հագնելը եւ սրբությամբ ու արդարությամբ նորոգվելը: Խույրը խորհրդանշում է իմաստության պսակը եւ փրկության սաղավարտը, քահանայի ուրարը՝ Քրիստոսի Ավետարանի լուծը, որը քահանան պատրաստվում է կրել: Պատարագիչը խորհրդի կատարման ժամանակ գլուխը չի ծածկում« այլ պաշտամունքը մատուցում է բաց գլխով« որը խորհրդանշում է պատարագիչ հոգեւորականի համարձակությունը եւ սրտի պարզությունը: Իսկ խորհրդին մասնակցող մյուս հոգեւորականները՝ եպիսկոպոսները, աբեղաները, քահանաները, գլուխները ծածկում են« որովհետեւ Խորհրդի կատարման ժամանակ հարկ է բոլոր զգայարանները ծածուկ պահել:

Դպիրները, «Խորհուրդ խորին» շարականը երգելով, քահանայի եւ սարկավագի հետ գալիս են բեմի առաջ, եւ քահանան լվանում է ձեռքերը՝ ծածուկ աղոթելով (սաղմոս ԻԵ): Լվացումը խորհրդանշում է մեղքերից մաքրվելը, որից հետո միայն կարելի է բարձրանալ ս. Սեղան:

Խոստովանություն: Լվացումից հետո քահանան, դառնալով դեպի ժողովուրդը, Աստվածածնի բարեխոսությամբ հրապարակայնորեն խոստովանում է իր մեղքերը: Այս օրինակով էլ ժողովուրդը մինչեւ հաղորդվելը պարտավոր է մաքրվել՝ խոստովանել իր մեղքերը եւ ապա միայն ճաշակել:

Նախամուտ: Խոստովանելուց հետո պատարագիչը սաղմոսերգությամբ բարձրանում է բեմ. մեծ վարագույրը փակվում է, եւ դպիրները երգում են հոգեւոր մեղեդի կամ օրվան պատշաճ տաղը« իսկ քահանան ընթերցում է Նարեկացու աղոթքը« որն ուղղված է Ս. Հոգուն: Այս աղոթքով քահանան հայցում է Ս. Հոգու օգնությունը՝ Խորհուրդը կատարելու: Վարագույրի փակվելը խորհրդանշում է մեղքի պատճառով մարդկանց եւ Աստծու միջեւ բաժանումը:

Առաջադրություն: Աղոթքից հետո քահանան գնում է ընծայարան, որտեղ սարկավագի ձեռքից վերցնելով նվիրական հացը կամ նշխարը՝ դնում է մաղզմայի վրա եւ գինին խաչաձեւ լցնում սկիհի մեջ:

Այնուհետեւ Ոսկեբերանի աղոթքով (Տէր Աստուած մեր) քահանան դիմում է Հայր Աստծուն ու աղոթքի ավարտին սկիհը ծածկում քողով: Սկսվում է խնկարկությունը:

Բ. ՃԱՇՈՒ ՊԱՇՏՈՆ

Քահանան բուրվառով խնկարկում է սուրբ սպասը եւ այդպես գալիս ս. Սեղանի առաջ: Խնկարկում է (վարագույրը բացվում է) ու իջնում բեմից՝ թափորով շրջելով ժողովրդի մեջ, այնուհետեւ կրկին բարձրանում բեմ ¥«աշխարհագալոց»): «Աշխարհագալոցը» խորհրդանշում է Հիսուս Քրիստոսի մարդեղացումը« մեր բնությանը հաղորդ լինելը« Ավետարանի անուշահոտ բուրմունքի տարածումը (խնկարկություն), իսկ դարձյալ բեմ ելնելը՝ երկինք բարձրանալը:

Ժամամուտ: Այստեղ քահանան փոխարինում է Քրիստոսին, եւ սարկավագը «Օրհնե՞ա Տէր» ասելով, նրանից աստվածային օրհնությունն է հայցում« իսկ «Եւ եւս խաղաղութեան» աղոթքով խնդրում այն երկնային խաղաղությունը« որը Հիսուսը խոստացավ Իր աշակերտներին (Հովհ. ԺԴ):

Որպես այդ խնդրանքի հետեւանք՝ քահանան բարձրաձայն արտասանում է «Տէր Աստուած մեր» աղոթքը« եւ դպիրներն ըստ տոնացույցի երգում են օրվա սաղմոսն ու շարականը:

Երեքսրբյան փառաբանություն: Սրան հաջորդում է քահանայի ծածուկ աղոթքը« ուր նա հրեշտակային դասի աջակցությունն է խնդրում՝ իր պաշտոնը կատարելու, որից հետո Ավետարանը բարձրացնելով՝ ի տես ժողովրդի տալիս է սարկավագին« որն աջակողմյան դասից ձախակողմյանն է անցնում« որի ընթացքում դպիրները երգում են «Երեքսրբեանը»՝ Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ...: Սարկավագների այս անցումը ժողովրդին ուշադրության հրավիրելու նպատակն ունի« որովհետեւ սկսվելու է Ավետարանի ընթերցումը: Այդ ընթացքում շարժվում են քշոցները« ինչը խորհրդանշում է հրեշտակների բոլոր դասերի ներկայությունը՝ ինչպես քահանան խնդրել էր իր ծածուկ աղոթքում:

«Երեքսրբեանի» ժամանակ քահանան իր ծածուկ աղոթքով (Աստուած Սուրբ, որ ի սուրբս) վկայում է մարգարեների կանխասացությունը« ովքեր տեսան Աստծուն« Ով փառաբանվում էր սերովբեների եւ քերովբեների կողմից« եւ դրա նմանությամբ էլ քերովբեական այս երգն ուղղվում է Աստծուն:

«Երեքսրբեանից» հետո սկսվում է սարկավագի «համաշխարհական քարոզը»« ուր նա Տիրոջից խաղաղություն է խնդրում՝ վերին խաղաղությունը, եւ այդ կարգով էլ՝ վերից ներքեւ« խաղաղություն խնդրում աշխարհի« կաթողիկոսի« եպիսկոպոսների« հոգեւորականների« ժողովրդի համար: «Համաշխարհականի» վերջում սարկավագը հիշում է ինչպես ապրողներին« այնպես էլ ննջեցյալներին, որով եւ այս զորախմբին են միանում նաեւ ննջեցյալները« ովքեր անբաժան են Եկեղեցուց:

Ընթերցանություն: Սկսվում է ընթերցանության պահը, երբ հատվածներ են կարդացվում մարգարեական գրքերից եւ առաքելական թղթերից« իսկ վերջում՝ Ավետարանից« քանի որ ինչպես մարգարեները մարգարեացան Հիսուսի՝ աշխարհ գալը, այդպես էլ առաքյալները վկայեցին եւ ականատես եղան մարգարեության իրականացմանը« իսկ Ավետարանը դարձավ այդ ամբողջի՝ Մարգարեների եւ Օրենքի լրումը:

Այնուհետեւ սարկավագը դառնում է դեպի ս. Սեղանը եւ Ավետարանը բարձրացրած՝ ասում է հավատի խոստովանությունը՝ «Հաւատամքը», իսկ ժողովուրդը ձեռնամած հետեւում է՝ ցածր ձայնով կրկնելով այն:

Սարկավագը շարունակում է Աստծուց խնդրել ընդունել մեր աղաչանքները« իսկ քահանան իր ծածուկ աղոթքի մեջ Հիսուս Քրիստոսից խնդրում է, որ Նա Իր մեծ ողորմությամբ մեզ մասնակից դարձնի աստվածային պարգեւներին եւ ների մեր մեղքերը: Նույնը պատարագիչ քահանայի համար դպիրներն են խնդրում՝ ասելով. «Եւ ընդ հոգւոյդ քում»:

Գ. ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ ԿԱՆՈՆԸ

Վերաբերում: Քահանան հանում է սաղավարտը« որը խորհրդանշում է« թե մինչ այդ նա իր մեջ կրում էր Հիսուսի իշխանական փառքը« իսկ հիմա մտնում է ծառայական կերպի մեջ« սպասավոր դառնում աստվածային

փրկարար Խորհրդին: Եվ եթե մինչ այս քահանայի աղոթքներն ուղղված էին Քրիստոսին« ապա սկսած այս պահից՝ ուղղվում են Հայր Աստծուն՝ գործակից խնդրելով Ս. Հոգի Աստծուն« որովհետեւ Որդին Աստված՝ Քրիստոսը, պատարագվում է ս. Սեղանի վրա:

Այստեղ սարկավագը բարձր ձայնով ասում է «Մի ոք յերախայից»-ը՝ դուրս հրավիրելով հավատի մեջ եղող տկար եղողներին« երախաներին« այսինքն՝ չմկրտվածներին եւ նրանց, ովքեր պատրաստ չեն մասնակցելու սրբազան խորհրդին: Սրան հետեւում է «Մարմին տէրունական» երգը« որով դպիրները, այսինքն՝ ժողովուրդը« խոստովանում են« որ հավատում են Տերունական Մարմնի եւ Փրկչական Արյան՝ ս. Սեղանի վրա գտնվելուն:

Այնուհետեւ սարկավագը խնկարկում է ս. Սեղանին եւ գնում Խորհրդանոց. հնչում են քշոցները« դպիրները երգում են օրվան համապատասխան սրբասացությունը՝ երգը, իսկ քահանան ծածուկ աղոթքով բազկատարած խնդրում է« որ Աստված զորացնի իրեն՝ Ընծաները մատուցելու եւ խորհուրդը կատարելու: Աղոթքից հետո քահանան մի քայլ հեռանում է ս. Սեղանից եւ սպասում սարկավագի ձեռքից Ընծաներն ընդունելուն:

Քահանան, ընդունելով Ընծաները, դնում է Սեղանի վրա« անմիջապես մատների ծայրերը լվանում: Այս լվացումը կատարվում է Վերջին ընթրիքի լվացման օրինակով եւ մեզ կրկին թելադրում հաղորդվելուց առաջ մեղքերից մաքրվել:

Ողջույնը: Սարկավագը քարոզում է« որ ինչպես քահանան լվացվեց« նմանապես եւ ժողովուրդը ս. Սեղանի առաջ անթերի« կատարյալ հավատով պատրաստվի հաղորդվելու: Քահանան ծածուկ աղոթում է (Տէր Աստուած զօրութեանց)« որ Աստված ընդունի Ընծաները եւ Միածնի Մարմինն ու Արյունը ճաշակողների համար մեղքերի թողության դեղ լինեն:

Այս աղոթքից հետո քահանան հրաման է տալիս. «Ողջոյն տո՞ւք միմեանց ի համբոյր սրբութեան» եւ սկսվում է ողջույնի պահը: Մեր եկեղեցում

սրբության համբույրը փոխանցում են աջ եւ ձախ այտերն իրար մոտեցնելով« իսկ ովքեր պատրաստ չեն հաղորդվելու« դուրս են հրավիրվում՝ այնտեղ աղոթելու: Այս պահին քահանան սկիհի քողը կիսով չափ բացում է« որպեսզի երեւա ընծան՝ նշխարը եւ ասում. «Ողջոյն Քեզ՝ Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ», որին հետեւում է սարկավագի պատասխանը. «Օրհնեալ է յայտնութիւնը Քրիստոսի»« եւ դպիրները երգում են «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ» երգը: Նույն խոսքերով էլ հավատացյալները ողջույնը փոխանցում են իրար:

Սրբասացություն: Ողջույնին հետեւում է սրբասացության արարողությունը« երբ սարկավագը զգուշացնում է ահով ու երկյուղով կանգնել« քանի որ մոտ է հաղորդության պահը, եւ Աստծու Գառը մեր փրկության ու մեղքերի համար պետք է պատարագվի ս. Սեղանի վրա: Այնուհետեւ հետեւում է «Զդրունս« զդրունս…» զգուշացնող հրամանը« որով կոչ է արվում փակել մեր մտքի« սրտի« խորհուրդների դռները եւ կենտրոնանալ միայն փրկագործության խորհրդի վրա« ինչպես նաեւ փակել եկեղեցու դռները, որպեսզի քիչ առաջ դուրս հրավիրվածները ներս չմտնեն: Այս ընթացքում քահանան ծածուկ աղոթում է (Արժան է ստուգապէս) եւ փառաբանում Հորը« որ փրկագործության տնօրինությամբ մեզ երկնայինների հոգեւոր պարին մասնակցելու արժանացրեց: Ուստի սերովբեների եւ քերովբեների հետ միաձայն համարձակ երգում ենք. «Սուրբ« սուրբ« սուրբ…»: Եսայի մարգարեի այս խոսքերը հրեշտակների երգն է« ուր նրանք փառաբանում են Աստծուն (Եսայի Զ 3):

Սրբասացության ընթացքում քահանան բազկատարած ծածուկ աղոթում է Հայր Աստծուն՝ փառաբանելով Նրան« որ երբեք չանտեսեց մարդուն եւ նրա մեղքերը թեթեւացնելու ու սրբելու համար Իր Որդուն աշխարհ ուղարկեց: Ապա հիշում է Հիսուսի կյանքը« փրկագործությունը« Վերնատան ընթրիքը:

Աղոթքից հետո քահանան բացում է սկիհը« վերցնում նշխարը եւ բարձրաձայն ասում. «Առէ՞ք« կերէ՞ք« այս է Մարմին Իմ …»: Այնուհետեւ բարձրացնում է սկիհը եւ ասում. «Արբէ՞ք ի սմանէ ամենեքեան« այս է Արիւն Իմ…»« որից հետո սկիհը մաղզմայի վրա դնելով քողով ծածկում է

եւ ծածուկ աղոթում՝ հիշելով, որ Միածնի պատվերով է Գինին եւ Արյունը բերում Սեղանին՝ Հոր առաջ, եւ աղոթքի վերջում« Ընծաները փոքր ինչ բարձրացնելով« մատուցում է Հորը եւ ասում. «Եւ զՔոյս ի Քոյոց Քեզ մատուցանեմք…»: Այսինքն՝ Հիսուսը՝ Քո Որդին« որ Քեզանից է եւ Քոնն է« Քո կամքով եկավ աշխարհ, եւ այժմ էլ նույն Հիսուսին Քեզ ենք ընծայում՝ բոլորիս փրկության համար:

Այդ ժամանակ դպիրները երգում են «Յամենայնի օրհնեալ ես» երգը« իսկ քահանան ծածուկ աղոթում է եւ երեք անգամ օրհնում Հացը« երեք անգամ՝ Գինին եւ երեք անգամ՝ Հացն ու Գինին միասին՝ նույն խոսքերով:

Եթե մինչ այս հացն ու գինին խորհրդանշում էին Հիսուսի Մարմինն ու Արյունը« ապա այս պահից« երբ Ս. Հոգին իջնելով սրբագործում է Ընծաները« դրանք ճշմարտապես են դառնում Նրա Մարմինն ու Արյունը:

Հիշատակություն: Սրանից հետո քահանան ծածուկ աղոթում է՝ խնդրելով« որ սրբագործված Ընծաների միջոցով Աստված սեր« հաստատություն եւ ցանկալի խաղաղություն շնորհի ամբողջ աշխարհին« ս. Եկեղեցուն« հոգեւորականներին« թագավորներին« ժողովրդին: Այնուհետեւ սկսվում է հիշատակությունների շարքը, ուր հիշվում են ս. Աստվածածինը« ս. Հովհաննես Մկրտիչը« ս. Ստեփանոս Նախավկան եւ ուրիշ սրբեր: Հիշատակումների այս շարքը խորհրդանշում է զինվորյալ (ապրողների) եւ հաղթական (ննջեցյալների) եկեղեցիների միությունը: Սարկավագն անցնում է խորանի աջ կողմը, եւ սկսվում է սրբերի հիշատակումը: Աջ կողմն անցնելը խորհրդանշում է սրբերի աջակողմյան՝ վերին դասին պատկանելը:

Երբ ավարտվում է հիշատակությունների շարքը« սարկավագներն անցնում են Սեղանի ձախ կողմը՝ հիշելու արդեն զինվորյալներին՝ կենդանի հավատացյալներին« քանի որ աջ կողմը խորհրդանշում է սրբերի ժողովը« իսկ ձախը՝ ապրող հավատացյալների:

Մեր եկեղեցում ընդունված կարգի համաձայն՝ այս պահին արարողությունն ընդհատվում է, եւ պատարագիչը կամ որեւէ

բարձրաստիճան հոգեւորական սկսում է քարոզել ժողովրդին՝ ըստ օրվա նյութի կամ սուրբգրային որեւէ բնաբանի:

Քարոզխոսության ավարտից հետո քահանան բարձրաձայն ասում է. «Եւ տուր մեզ համարձակաձայն բարբառով…» աղոթքը, եւ ժողովուրդը« որպես խնդրանքների փակում« արտասանում՝ «Հայր մերը»:

Ճաշակում: Ժողովուրդը ծնկի է գալիս« իսկ քահանան, գլուխը խոնարհելով, սկիհի առաջ ծածուկ աղոթում է Ս. Հոգուն (Խոնարհման աղոթք)՝ խնդրելով որ Աստված ողորմի այս խոնարհված ժողովրդին: Հետեւում է սարկավագի կոչը՝ «Պռոսխումէ», որով ուշադրության է հրավիրում խոնարհված ժողովրդին, տեսնելու Տերունական Մարմինը: Եվ այդ պահին քահանան, Սուրբ Մարմինը բարձրացնելով, ասում է՝ «Ի սրբութիւն սրբոց»« այսինքն՝ ահա սուրբերի սրբությունը՝ Սուրբ Մարմինը« որին փափագում ենք հաղորդվել: Այնուհետեւ հետեւում են քահանայի օրհնությունները եւ աղոթքը՝ արժանի լինելու այդ Մարմնին եւ Արյանը: Քահանան համբուրում է Սեղանը եւ ս. Մարմինն ընկղմում Արյան մեջ« ապա վեր բարձրացնելով՝ դառնում դեպի ժողովուրդը« խաչակնքում նրան եւ հետ շրջվելով՝ Սրբությունը դնում Սեղանի վրա: Վարագույրը փակվում է: «Տէր ողորմեա»-ի պահն է. ժողովուրդը ծնկի է գալիս« քահանան ծածուկ աղոթում է վարագույրի հետեւում« Սուրբ Հացը՝ նշխարը, չորս մասի բաժանում եւ թողնում սկիհի մեջ՝ ասելով՝ «Լրումն Հոգւոյն Սրբոյ»: Ապա շարունակում է ծածուկ աղոթքը՝ խնդրելով« որ Աստված իրեն եւ ժողովրդին արժանի դարձնի Մարմնին ու Արյանը հաղորդվելուն:

Քահանան հաղորդվում է, այնուհետեւ վարագույրը բացվում է, եւ արժանավորները, մոտենալով ս. Սեղանին, հաղորդվում են« Սրբությունն առանց ծամելու կուլ տալով:

Դ. ԱՐՁԱԿՈՒՄ

Գոհություն: Ժողովրդին հաղորդություն տալուց հետո քահանան վերադառնում է դեպի ս. Սեղան« վարագույրը կրկին փակվում է, եւ պատարագիչ քահանան ճաշակում է սկիհի մեջ մնացած Մարմինն ու

Արյունը« մաքրում սկիհը« սրբում եւ սքողում՝ գոհություն հայտնելով Ս. Երրորդությանը՝ Հայր Աստծուն« Որդի Աստծուն եւ Ս. Հոգի Աստծուն: Գոհաբանական աղոթքին միանում են նաեւ դպիրները՝ այսինքն ժողովուրդը: Աղոթքից հետո քահանան լվանում է ձեռքերը« սաղավարտը դնում գլխին եւ իր պաշտոնն արդեն ավարտած լինելով՝ պատրաստվում հեռանալ ս. Սեղանից:

Այստեղ վարագույրը բացվում է« եւ քահանան վերջին անգամ երկրպագում է ս. Սեղանի առաջ« վերցնում Ավետարանը եւ հարավային՝ ձախ կողմով իջնում Բեմից՝ արտասանելով «Որ օրհնես…» աղոթքը:

Ինչպես քահանան արարողության սկզբում սաղավարտը գլխին բեմ բարձրացավ, այդպես էլ պիտի իջնի, քանի որ քահանան Քրիստոսի օրինակն է, իսկ Քրիստոսն ինչպես երկինք բարձրացավ, այնպես էլ պիտի վերադառնա՝ դատելու մարդկանց՝ ըստ իրենց գործերի:

Սուրբ Պատարագի բուն խորհուրդն արդեն ավարտված է« սակայն ժողովրդին արձակելուց առաջ դարձյալ ընթերցվում է Ավետարանը (Հովհ. Ա 1-14), որից հետո ժողովուրդը «Պահպանիչ» աղոթքով արձակվում է: